

«ԸՍԷՔ, Ո՞ՒՐ Է ՄԵՐ ՍԽԱԼԸ»

Դերերը փոխուած էին:

Յուսանք որ երեց սերունդը ուշացած չէ անդրադառնալու թէ ինչեր ունի սորվելիք երիտասարդներէն, անոնցմէ՝ որոնք դժբախտաբար միշտ կ'որակուին անփորձներ, տաքարիւններ, աճապարողներ:

Ինչ երիտասարդ, 15 տարեկանէն 23 տարեկան, հրաւիրուած էին Ուրբաթ 15 Մայիսին Արևուճիլի Հայ Աւետարանական Եկեղեցւոյ սրահը, Մշակութային Յանձնախումբին կազմակերպած երեկոյին իրենց խօսքը բերելու:

Քննարկուեցան Սփիւռքի եւ մասնաւորաբար ֆրանսահայ գաղութի իրականութեան վերաբերեալ սիւթեր, ինչպէս՝ սփիւռքահայութեան պայքար, ինքնութիւն, պարտականութիւն, ի՞նչ կը նշանակէ բացուիլ դէպի ուրիշը, գոյգ մշակոյթ եւ այլն:

Եկեղեցւոյ պատանիներէն Անուշ Պանիքեան՝ Պարոյր Սեւակի, Նիկողոս Սարաֆեանի եւ Ամին Մաալուֆի հեղինակութիւններէն մեջընդմէջ հատուածներ ընթերցեց:

Հրաւիրեալ երիտասարդները՝ Վահան Զերովբեան, Հայկ Գալստեան, Կորիւն Խաչատրեան, Թալին Զարշ, Շուշան Զերովբեան, Նաիրի Խաչատրեան, Վարուժան Փափազեան, Սեւանա Չաքրեան, Հայկ Պչաքճեան, բոլորն ալ հայաշունչ միջավայրի արգասիք, իրենց արտայայտած մտահոգութիւններուն եւ փաստարկումներուն ընդմէջէն մատնանշեցին աւագ սերունդին հիմնական թերացումները, որոնց պատճառով այսօրուան սփիւռքահայ երիտասարդութիւնը իր հայութիւնը անբարդոյթ եւ երկրին հետ համերաշխութեամբ ապրելու համար ցանկալի հաւասարակշռութիւնը չունի տակաւին:

Ըսի՞ն ուր էր մեծերուն սխալը:

Դերերը փոխուած էին: Ամենայնդէպս, սխալը մատնանշողները, այս անգամ գոնէ, ճիշտ անձեր էին ճիշտ դերի վրայ: